ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

# <u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3</u>

19 ԱՊՐԻԼԻ 2024 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 (ինը)

անդամներ:

Բացակա էին՝ [illegible]

**Նիստի աշխատանքներին** մասնակցում էր **«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության փորձագետ Մարի Մելքոնյանը:**

**<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>**

[illegible]

**<u>Նիստը վարում էր</u>** [illegible]

**<u>Նիստը արձանագրում էր</u>** [illegible]

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. <u>ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ</u>/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Է***

1.Հաստատել եղեգիս համայնքի ավագանու 19-ը ապրիլի 2024թ. արտահերթ՝ երրորդ նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.եղեգիս համայնքի ավագանու 02.02.2024թ. թիվ 14Ա որոշման բովանդակությունը նոր խմբագրությամբ շարադրելու մասին,

3.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղային հանքերևակման տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով

երկրաբանական ուսումնասիրության համար երկու տարի ժամկետով պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին,

4.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին,

5.Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին,

6.Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,09576հա և 0,10002հա մակերեսներով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

7.Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,54761հա և 1,32406հա մակերեսներով գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

8.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1,49868հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

9.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.0765հա և 0.04հա մակերեսներով արոտավայր հողատեսքերի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

10.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,33014հա մակերեսով վարելահող հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

11.Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,70694հա և 0,80684հա մակերեսներով այլ հողատեսքերն աճուրդային կարգով օտարելու մասին,

12.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,66հա մակերեսով այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

13.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,09709հա այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

14.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատարածքից 200ք/մ մակերեսով հողամասը անհատույց օգտագործման, առանց մրցույթի «ՍԻՄՈՆՅԱՆ» կրթական հիմնադրամին հատկացնելու մասին,

15.Եղեգիս համայնքի մի խումբ բնակիչների դրամական օգնություն տրամադրելու մասին,

16.Եղեգիս համայնքի ղեկավարի 29/02/2024թ. թիվ 53Ա և 01/04/2024թ. թիվ 70Ա որոշումներն ի գիտություն ընդունելու մասին,

17.Եղեգիս համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի երրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին,

18.Եղեգիս համայնքի ավագանու 20.12.2023թ. թիվ 165Ն որոշման հավելվածում լրացումներ կատարելու մասին,

19.02-ը փետրվարի 2024 թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշմամբ հաստատված բյուջեում վերաբաշխում կատարելու մասին,

20.Եղեգիս համայնքի ավագանու 24.03.2023թ. թիվ 37Ա որոշման կից հավելվածները նոր խմբագրությամբ շարադրելու մասին:

21.Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2024թ. առաջին եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին,

22.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

23.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

24.Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողատեսքը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

25.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը հաստատելու մասին,

26.Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ընթացքում 2022 թվականի սեպտեմբերի 28-ին զոհված, գումարտակի հրամանատար, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի ասպետ, փոխգնդապետ Նահապետ Նվերի Մարգարյանի հիշատակին Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի գերեզմանոցին կից կառուցված հուշահամալիրը Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար զոհված գումարտակի հրամանատար, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի ասպետ, փոխգնդապետ Նահապետ Նվերի Մարգարյանի անվամբ զինվորական հուշահամալիր-պանթեոն ճանաչելու վերաբերյալ:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 02/02/2024Թ. ԹԻՎ 14Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ.*** Ա. Դավթյան /

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով տնտեսական զարգացման ծրագրային հայտեր հաստատելու մասին» թիվ 14Ա որոշման բովանդակությունը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ՝

«Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով համայնքի կողմից զարգացման ծրագրերին մասնակցելու վերաբերյալ ստորև ներկայացվող հայտերը՝

1)Ոռոգման խողովակաշարի կառուցում՝ Եղեգիս համայնքի Հորբատեղ, Հերմոն, Հորս, Սալլի, Աղնջաձոր, Թառաթումբ, Քարագլուխ, Արտաբույնք, Գողթանիկ, Եղեգիս գյուղերում (տնտեսական զարգացման ծրագիր),

2)Խմելու ջրի խողովակաշարի կառուցում և վերանորոգում՝ Եղեգիս համայնքի Վարդահովիտ, Քարագլուխ և Հորս գյուղերում (տնտեսական զարգացման ծրագիր),

3)Եղեգիս համայնքի Շատին բնակավայրում համայնքապետարանի շենքի կառուցում,

4)աղբատար մեքենայի և աղբամանների ձեռքբերում,

5)ավտոաշտարակի ձեռքբերում:»:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29 Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԵՐԵՎԱԿՄԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/ԶԵկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի 44-րդ կետի ը) ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով «Մենդիա Ռեսուրսիս» ՍՊԸ-ին տրամադրված երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/370 թույլտվությունը

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող ***համայնքային*** սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքերը երկու տարի ժամկետով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով տրամադրելուն՝

1)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0241, մակերեսը 227,6956հա,

2)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0242, մակերեսը 11,6498հա:

Ընդհանուր մակերեսը 239,3454հա:

2.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող ***պետական*** սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքերը երկու տարի ժամկետով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով տրամադրելուն՝

1)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0239, մակերեսը 3,4855հա,

2)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0172, մակերեսը 68,4593հա,

3)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0240, մակերեսը 4,6816հա,

4)կադաստրային ծածկագիր 10-041-0551-0001, մակերեսը 63,6282հա,

5)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0002, մակերեսը 49,7312հա,

6)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0017, մակերեսը 33,1763հա,

7)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0004, մակերեսը 14,9966հա,

8)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0007, մակերեսը 45,0հա,

9)կադաստրային ծածկագիր 10-041-0608-0042, մակերեսը 96,32385հա,

10)կադաստրային ծածկագիր 10-041-0608-0041, մակերեսը 310,7666հա,

11)կադաստրային ծածկագիր 10-041-0608-0040, մակերեսը 130,4622հա,

12)կադաստրային ծածկագիր 10-041-0201-0238, մակերեսը 34,0134հա,

13)կադաստրային ծածկագիր 10-041-0557-0018, մակերեսը 35,54741հա:

Ընդհանուր մակերեսը 890,27216հա:

3.Վարձավճարը սահմանել տարեկան 5500000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Կողմ- 0 Դեմ- 9 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30 Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՌԱԹՈՒՄԲ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ «ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ.*** Ա. Գ-ՌԻ-Կվ-2ր /

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով, 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 14/01/2010 թվականի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N16-Ն որոշման 2-րդ կետը , ***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Տալ համաձայնություն Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող, ***համայնքային*** սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելու ստորև ներկայացված հողերը՝

1)կադաստրային ծածկագիր 10-024-0111-0001, մակերեսը 10,0992հա, այլ հողատեսք,

2)կադաստրային ծածկագիր 10-024-0103-0001, մակերեսը 138,4235հա, այլ հողատեսք,

3)կադաստրային ծածկագիր 10-024-0109-0057-ից, մակերեսը 78,6546հա, արոտավայր, վարելահող հողատեսք, որից արոտավայր՝ 77,5174հա, վարելահող՝ 1,1371հա,

4)կադաստրային ծածկագիր 10-024-0112-0001, մակերեսը 7,7445հա, այլ հողատեսքեր, խոտհարք հողատեսք, որից այլ հողատեսքեր՝ 5,2910հա, խոտհարք՝ 2,4535հա,

5)կադաստրային ծածկագիր 10-024-0104-0001-ից, մակերես 89,6474հա, այլ հողատեսքեր, խոտհարք հողատեսք, որից այլ հողատեսքեր՝ 88,7508հա, խոտհարք՝ 0,8966հա,

6)կադաստրային ծածկագիր 10-024-0101-0001, մակերես 59,9678հա, արոտավայր, խոտհարք հողատեսք, որից արոտավայր՝ 55,8651հա, խոտհարք՝ 4,1027հա,

7)կադաստրային ծածկագիր 10-024-0102-0001, մակերես 26,1100հա, արոտավայր, խոտհարք հողատեսք, որից արոտավայր՝ 22,5830հա, խոտհարք՝ 3,5270,

8) կադաստրային ծածկագիր 10-024-0110-0001, մակերես 79,5296հա, այլ հողատեսքեր, խոտհարք հողատեսք, որից այլ հողատեսքեր՝ 77,8445հա, խոտհարք՝ 1,6851հա:

2.Տալ համաձայնություն Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող, ***պետական*** սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային

արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելու ստորև ներկայացված հողերը՝

1)կադաստրային ծածկագիր 10-024-0120-0001, մակերեսը 0,94647հա, արոտավայր հողատեսք,

2)կադաստրային ծածկագիր 10-024-0121-0001, մակերեսը 0,2660հա, արոտավայր հողատեսք,

3)կադաստրային ծածկագիր 10-024-0122-0001, մակերեսը 2,7758հա, արոտավայր, խոտհարք հողատեսք, որից արոտավայր՝ 2,4730հա, խոտհարք՝ 0,3028հա,

4)կադաստրային ծածկագիր 10-024-0995-0001, մակերեսը 940,1875հա, արոտավայր, խոտհարք, այլ հողատեսք, որից արոտավայր՝ 731,3112հա, խոտհարք՝ 84,8224հա, այլ հողատեսքեր՝ 124,0539:

3.Անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել համայնքի բնակիչներին վերը նշված հողատարածքներում անասունների արածեցումը և խոտհունձը չխոչընդոտելու պայմանով:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՂԹԱՆԻԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ «ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ.* Մ. Գրիգորյան /

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով, 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, **ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Տալ համաձայնություն Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող, ***համայնքային*** սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելու ստորև ներկայացված հողերը՝

11)կադաստրային ծածկագիր 10-018-0143-0018 , մակերեսը 11,36429հա, այլ հողատեսք,

2)կադաստրային ծածկագիր 10-018-0146-0031, մակերեսը 15,87505հա, այլ հողատեսք,

3)կադաստրային ծածկագիր 10-018-0138-0001, մակերեսը 8,34152հա, խոտհարք հողատեսք,

4)կադաստրային ծածկագիր 10-018-0128-0001, մակերեսը 19,8504հա, խոտհարք հողատեսք:

2.Անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել համայնքի բնակիչներին վերը նշված հողատարածքներում անասունների արածեցումը և խոտհունձը չխոչընդոտելու պայմանով:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32 Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՆՋԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,09576ՀԱ ԵՎ 0,10002ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. [illegible]/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով, ***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

կադաստրային ծածկագիր՝ 10-007-0163-0001, մակերեսը՝ 0,09576 հա,
կադաստրային ծածկագիր՝ 10-007-0163-0060, մակերեսը՝ 0,10002 հա:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 120 (մեկ հարյուր քսան) տոկոսի չափով:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,54761ՀԱ ԵՎ 1,32406ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. [illegible] /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է**

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

1)կադաստրային ծածկագիր 10-031-0107- , մակերեսը **0,54761հա**, վարելահող, այլ հողատեսք, որից վարելահող 0,34139հա, այլ հողատեսք 0,20622հա,

2)կադաստրային ծածկագիր 10-031-0107- , մակերեսը **1,32406**հա, վարելահող, այլ հողատեսք, որից վարելահող 0,62561հա, այլ հողատեսք 0,69845հա,

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 120 ([illegible]) տոկոսի չափով:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34 Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1,49868ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով, **Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է**

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

կադաստրային ծածկագիր 10-029-0109- , մակերեսը 1,49868հա:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 120 ( մեկ հարյուր քսան ) տոկոսի չափով:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0765ՀԱ ԵՎ 0,04ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. Ա. Գրիգորյան /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 14-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները, ***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.0765հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102-0070) և 0.04հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0136- ) արոտավայր հողատեսքերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը էներգետիկայի՝ ՓՀԷԿ կառուցելու համար:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,33014ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

* /Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ</u>/ *

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-035-0001-0120, մակերեսը 0,33014հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150 (մեկ հարյուր հիսուն) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 0 Դեմ- 9 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՂԹԱՆԻԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,70694ՀԱ ԵՎ 0,80684ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

* /Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ</u>/ *

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ

հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով,
***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-018-0148-0033, մակերեսը 0,70694հա, կադաստրային ծածկագիր 10-018-0101-0012, մակերեսը 0,80684հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150 (հարյուր հիսուն) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 0 Դեմ- 9 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38Ա/

Լսեցին
***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,66ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ***ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ***/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-029-0108- , մակերեսը 0,66հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 200 (երկու հարյուր ) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ-9 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,09709ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ</u>/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-029-0022-     , մակերեսը 0,09709հա:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 200 ( երկու հարյուր ) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 5 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ 200Ք/Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ «ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ</u>/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով, 75-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 38-րդ կետի բ) ենթակետի և 39-րդ կետի պահանջներով, ***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող Շատին գյուղի 2-րդ փողոց, թիվ 118 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման 10-035-0003-0018 կադաստրային ծածկագրով

հողամասից 200 քմ հողատարածքը անհատույց օգտագործման, առանց մրցույթի 10(տաս) տարի ժամկետով հատկացնելու «ՍԻՄՈՆՅԱՆ» կրթական հիմնադրամին՝ «Թումոն տուփի մեջ» ծրագիրն իրականացնելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41Ա/

Լսեցին՝ ***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ.*** ______________________/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 02/02/2024թ. թվականի թիվ 10Լ որոշումը, Եղեգիս համայնքի ղեկավարի 19/02/2024թ. թիվ 43Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը, ***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Է***

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու դրամական օգնություն:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42Ա/

Լսեցին
***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29/02/2024Թ. ԹԻՎ 53Ա ԵՎ 01/04/2024Թ. ԹԻՎ 70Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ.*** ______________________/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, ***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Է***

1.Եղեգիս համայնքի ղեկավարի 29-ը փետրվարի 2024թ. «Շատին գյուղի նախկին բնակիչ, հանգուցյալ Իգոր Երվանդի Խուդոյանի հուղարկավորությունը պատշաճ կազմակերպելու մասին» թիվ 53Ա որոշումն ընդունել ի գիտություն:

2.Եղեգիս համայնքի ղեկավարի 01-ը ապրիլի 2024թ. «Սալլի գյուղի նախկին բնակչուհի, հանգուցյալ Հասմիկ Ստեփանի Օհանյանի հուղարկավորությունը պատշաճ կազմակերպելու մասին» թիվ 70Ա որոշումն ընդունել ի գիտություն:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43Ա/

Լսեցին
**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, ***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է***

Եղեգիս համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի երրորդ նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի ապրիլի 30-ին, ժամը 15:00-ին:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44Ա/

Լսեցին
**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20/12/2023 Թ. ԹԻՎ 165Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. [illegible]/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

Եղեգիս համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 165Ն որոշման կից հավելվածի տեղական վճարներ մասում 12-րդ կետից հետո լրացնել 12.1. կետով ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«12.1.Իրավաբանական անձանց խմելու ջրի վարձավճարի չափը սահմանել տարեկան 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ:»:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45Ն/

Լսեցին
**02-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 02Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ______________________/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է***

Հաստատել Եղեգիս համայնքի 02-ը փետրվարի 2024 թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշման մեջ կատարվող հետևյալ վերաբաշխումը.

1)Պակասեցնել

ա.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 03 դաս 01 ծրագիր 60՝ ջրամատակարարում ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4512-/սուբսիդիաներ ֆինանսական պետական «համայնքային» կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացված) ընթացիկ դրամաշնորհներ հոդվածից 500 000 ( հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

2)համապատասխանաբար ավելացնել

ա.Համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 06 դաս 01 ծրագիր 52՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4512-սուբսիդիաներ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) հոդվածին՝ 500 000 ( հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Կողմ- 9  Դեմ- 0  Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46Ն/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24/03/2023Թ. ԹԻՎ 37Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

/Զեկ. ______________________/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

Եղեգիս համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 24-ի «Եղեգիս համայնքի ավագանու 29/06/2021թ. թիվ 65Ա, 13/08/2021թ. թիվ78Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և Եղեգիս համայնքին սեփականության իրավունքով պատկանող «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրամադրած գյուղատնտեսական տեխնիկաներով, տրանսպորտային միջոցներով մատուցվող ծառայությունների դիմաց սակագներ սահմանելու և մեխանիզատորի, վարորդի, տրակտորիստի վարձատրության չափ սահմանելու մասին» թիվ 37Ա որոշման կից հավելվածները շարադրել նոր բովանդակությամբ՝ համաձայն սույն որոշման կից հավելվածների:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47Ա/

Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ***

*//Զեկ.* Մ. Ենոքյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, ***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

Ընդունել ի գիտություն Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2024թ. առաջին եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ.* Գր. Ծատուրյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով, ***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

1)կադաստրային ծածկագիր 10-029-0109- , մակերեսը 0,50542հա,

2)կադաստրային ծածկագիր 10-029-0109- , մակերեսը 0,29հա:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 1.2Ը (մեկ հազար դրամ) տոկոսի չափով:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 0 Դեմ- 9 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ.* [illegible] */*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով, ***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

1)կադաստրային ծածկագիր 10-041-0205-0062, մակերեսը 4,33241հա,

2)կադաստրային ծածկագիր 10-041-0205-0069, մակերեսը 3,8հա,

3)կադաստրային ծածկագիր 10-041-0205-0059, մակերեսը 18,74604հա:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 1.2Ը (մեկ հազար դրամ) տոկոսի չափով:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50Ա/

Լսեցին

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՂԹԱՆԻԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ***

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. [illegible]/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով, **Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է**

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողատեսքը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

1)կադաստրային ծածկագիր 10-018-0121-0008, մակերեսը 5 (հինգ) հա:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 120 ([illegible]) տոկոսի չափով:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. [illegible]/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4.4.-րդ հոդվածի 1-ին մասով

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52Ա/

Լսեցին՝

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԶՈՀՎԱԾ, ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, «ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱՉ» 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՍՊԵՏ, ՓՈԽԳՆԴԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏ ՆՎԵՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՌԱԹՈՒՄԲ ԳՅՈՒՂԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻՆ ԿԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾ ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, «ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱՉ» 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՍՊԵՏ, ՓՈԽԳՆԴԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏ ՆՎԵՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ-ՊԱՆԹԵՈՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

***/Զեկ. Հրաչյա Պողոսյան/***

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի բնակիչ, 2022 թվականի սեպտեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար զոհված, գումարտակի հրամանատար, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի ասպետ, փոխգնդապետ Նահապետ Նվերի Մարգարյանի հիշատակը հավերժացնելու նպատակով երախտապարտ հայրենակիցների հանգանակությունների միջոցով Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի գերեզմանոցին կից կառուցվել է հուշահամալիր: Հուշահամալիրը զբաղեցնում է 250 /երկու հարյուր հիսուն/ քառակուսի մետր տարածք: Հուշահամալիրում հավերժացված են Հայ ժողովրդի, պետության և պետականության, Հայաստանի Հանրապետության համար իրենց կյանքը տված հերոսների դիմանկարները ու իմաստալից ասույթները՝ նվիրված հայրենիքին, ազգին, պետությանը, ինչը հայեցի դաստիարակության, հայրենասիրական մղումների աղբյուր է հանդիսանում:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի դրույթներից բխող բովանդակությունից, ***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ընթացքում 2022 թվականի սեպտեմբերի 28-ին զոհված, գումարտակի հրամանատար, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի ասպետ, փոխգնդապետ Նահապետ Նվերի Մարգարյանի հիշատակին Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի գերեզմանոցին կից կառուցված 250 (երկու հարյուր հիսուն) քառակուսի մետր տարածք զբաղեցրած հուշահամալիրը ճանաչել Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար զոհված գումարտակի հրամանատար, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի ասպետ, փոխգնդապետ Նահապետ Նվերի Մարգարյանի անվամբ զինվորական հուշահամալիր-պանթեոն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 5 3 Ա/

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր

Մարտիրոսյան Նարեկ

Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Մանուկյան Սաթինե

Նազարյան Արգիշտի

Ղահրամանյան Վարդան

Գաբրիելյան Ահարոն

Սմբատյան Մամիկոն

Հարությունյան Կարեն

Սմբատյան Արսեն

Ստեփանյան Սաշա

Միքայելյան Քրիստինա

Բաբայան Վահե

Նիստն արձանագրեց՝